ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԳՈՂԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

գ. Գողթ, հեռ. 093 55 65 19 E-mail goghthamaynq@yandex.ru

N 101

16. 06. 2017թ.

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզպետ
պարոն՝ Կ. Գուլոյանին

Համաձայն "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի 9-րդ կետի՝ Ձեզ է ներկայացվում Գողթ համայնքի ավագանու 13.06.2017թ. թիվ 6 հերթական նիստի որոշումները՝ 10 թերթից:

Համայնքի ղեկավար՝ Կ. Գաբրիելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Գողթ համայնք, հրապարակի 1 E-mail goght.kotayq@mta.gov.am 093556519

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունիսի 2017 թ N 22

ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 14 հոդվածի պահանջները՝ *համայնքի ավագանին որոշում է.*

Հաստատել Գողթ համայնքի ավագանու 2017թ հունիսի 13-ի N6 հերթական նիստի օրակարգը

1. 2017թ ապրիլի 7-ի թիվ 14 ավագանու որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:
2. Գողթ համայնքի ավագանու 2016թ դեկտեմբերի 21-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԿՈՂՄ- (6) ԴԵՄ-(0) ՁԵՌՆՊԱՀ-(0)

1. Հակոբյան Արտյոմ
2. Հարությունյան Լևոն
3. Հովհաննիսյան Գագիկ
4. Սեդրակյան Վահրամ
5. Ստեփանյան Արտեմ
6. Ավդալյան Համազասպ

Համայնքի ղեկավար՝ Կ. Գաբրիելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Գողթ համայնք, հրապարակի 1 E-mail goght.kotayq@mta.gov.am 093556519

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունիսի 2017 թ N 23

2017Թ ԱՊՐԻԼԻ 7-Ի ԹԻՎ 14 ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով "Իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

Գողթ համայնքի սեփականության հանդիսացող հասարակական կառուցապատման և գյուղատնտեսական նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքի եղանակով օտարելու մասին 2017 թվականի ապրիլի 7-ի թիվ 14 որոշումը ուժը կորցրած ճանաչել պայմանագրի բացակայության պատճառով:

ԿՈՂՄ- (6) ԴԵՄ-(0) ՁԵՌՆՊԱՀ-(0)

1. Հակոբյան Արտյոմ
2. Հարությունյան Լևոն
3. Հովհաննիսյան Գագիկ
4. Սեդրակյան Վահրամ
5. Ստեփանյան Արտեմ
6. Ավդալյան Համազասպ

Համայնքի ղեկավար՝ Կ. Գաբրիելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Գողթ համայնք, հրապարակի 1 E-mail goght.kotayq@mta.gov.am 093556519

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունիսի 2017 թ N 24

ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 39-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ և 14-րդ հոդվածներով *ավագանին որոշում է*

1. Գողթ համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 24-ի << Կոտայքի մարզի Գողթ համայնքի վարչական տարածքում 2017թ. տեղական տուրքերի, վճարների և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերի սահմանումը >> թիվ 39-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

ԿՈՂՄ- (6) ԴԵՄ-(0) ՁԵՌՆՊԱՀ-(0)

1. Հակոբյան Արտյոմ
2. Հարությունյան Լևոն
3. Հովհաննիսյան Գագիկ
4. Սեդրակյան Վահրամ
5. Ստեփանյան Արտեմ
6. Ավդալյան Համազասպ

Համայնքի ղեկավար՝ Կ. Գաբրիելյան

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 39-Ն ՈՐՈՇՄԱՆ
ՓՈՓՈԽՎԱԾ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի 24-Ն

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017Թ. ՏԵՂԱԿԱՆ ՀԱՐԿԵՐԻ, ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

1. Հայաստանի Հանրապետության Գողթ համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար կիրառելով 0,5 գործակից.

հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ.

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ.

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ.

-1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ.

-3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,